

ՀԱՅ ԲԱՆԱՐՎԵՍԱԸ ՐԱՖՖՈՒ ԱՇԽԱՏԱՆ-ՔՆԵՐՈՒՄ

Անուշավան Պերրոյան

Ժողովրդական բանահյուսությունը սերտորեն աղերսվում է էթնիկ հանրության վաղնջական փուլերին, որը փոխանցվելով սերնդից-սերունդ և անցնելով հազարամյակներով, վերապրուկի տեսքով հասել է մինչև մեր ժամանակները: Դեռևս Խ. Աբովյանն անդրադառնալով ժողովրդի կենցաղում բանարվեստի տեղին ու դերին, գրել է. այն հետաքրքիր նյութեր կարող է տալ ազգագրագետ ուսումնասիրողին, քանի որ դրանց մեջ առատորեն դրսևորված են ժողովրդի սովորույթները, հավատալիքները և առհասարակ նրա վարքն ու բարքը¹: Պատահական չէ, որ Րաֆֆին ևս մեծ տեղ էր հատկացնում ժողովրդական բանահյուսությանը: Ըստ նրա, գյուղացու խրճիթը մտնելու, ժողովրդի հետ խոսելու համար պետք է հարյուրավոր առակներ ու ասացվածքներ գիտենալ²:

Բանարվեստը Րաֆֆու արձակում հանդես է գալիս բազմաժանր և տարբերույթ տեսքով. ավանդություններ, սնտոիապաշտություններ, փոխաբերական իմաստով արտահայտված մտքեր, բառակապակցություններ, ասացվածքներ, գրույցներ, երգումներ, օրհնանքներ, անեծքներ, առածներ, առակներ, դարձվածքներ, մաղթանքներ, երգեր և այլն: Վասպուրականի և Ատրպատականի հայության կենցաղի, լեզվի, բարբառի փայլուն իմացությունը, համ ու հոտի գգացումը թույլ են տվել Րաֆֆուն ժողովրդական բանահյուսությունը ներկայացնել արվեստի մակարդակով, գեղարվեստը դրանով շաղախելու և շրջանառության մեջ դնելու նախանձեղի հմտությամբ: Նրա աշխատանքներում առկա բանահյուսական նյութերը չափազանց տիպական են, բնութագրող ու նրբաճաշակ: Րաֆֆու արձակից քաղագրված բանահյուսական նյութերը նպատակահարմար է ներկայացնել այբբենական կարգով³:

«Աղամից ավելի մերկ են և Եվայից ավելի բոբիկ», 2,38:

Ագռավը շատ կցանկանար սիրամարգի փետուր ունենալ, բայց ո՞վ կտա, 3, 139:

«Ազատ չէր հարկից ինքը՝ մշակը, նա ավելի անբախտ էր քան իր եզը» /վերջինս ազատված էր հարկից/, 1, 3 75:

«Ազատասիրության հայրը բռնությունն է, իսկ մայրը՝ անիրավությունը», 3, 246:

¹ Տե՛ս Ղանալանյան Ա., Աբովյանը և ժողովրդական բանահյուսությունը, Երևան, 1941, էջ 20:

² Րաֆֆի, Խենթը, ԵԺ, հ.3, Երևան, 1962, էջ 172:

³ Տեքստում նշված է Րաֆֆու երկերի ժողովածուի հատորը և էջը:

«Ահա քրդական բռնապետության ճյուղակտուր եղած կոճղը», - ասաց Աս-
լանը քուրդ ծերունու ետևից նայելով, 2,310:

«Աղվեսը հավանոցի մեջ առյուծ կղառնա», 2,206:

«...աղվեսն իր որջը մտած ժամանակ չի երևում, բայց երբ որսորդները նրա
ծակի առաջ մուխ են դնում, խեղճ անասունն ինքը իրեն դուրս է գալիս», 2, 39:

«Աղվես կա, որ ուղտ է կուլ տալիս, բայց գայլի անունն է խայտառակ»,
3,335:

«Աղվեսից վկա ուզեցին, իր պոչը ցույց տվեց», 3,155:

«Աղքատությունը մահվան հետ միասին մտնում է մարդու շեմքից», դա մի
անհերքելի ճշմարտություն է, 2,37:

«Ամբոխն ուրիշ բան է, ամբոխի մեջ միտքը սպանել անհնարին է», 3,266:

Այսօր ևս «Օձի շապիկը հայր պահում է իր ծոցում, տալով նրան թելիսմա-
նական նշանակություն», 9,100:

Ամեն թշվառությունների, եղերնագործությունների և բարբարոսություննե-
րի մեջ միշտ գործել է հայի կացինը: Հայը ինքն է փորել իր ազգային շինված-
քի հիմքը և ինքն իր ձեռքով է կործանել իր սուրբ ու նվիրական հաստատու-
թյունները», 3,265:

«Ամեն ազգի դիցաբանության մեջ երևում է նույն ազգի փիլիսոփայություն-
նը, այլև նրա բնավորությունն ու ճաշակը», 9,101:

Ամեն հին բան նշելու համար սրախոսում էին. այդ անցքը շատ հին է, այն-
քան հին, որ Սիմոն պատվելին իր շապիկը դեռ նոր էր լվանալ տվել, 2,245:

Ամեն կողմից դժբախտությունը սկսել էր պաշարել ծերունի Խաչոյի տունը,
3,160:

Անապատը կենդանի մահացություն է, նրա նպատակն է սպանել արտաքին
մարդը- մարմինը, որպեսզի կենդանանա ներքին մարդը- հոգին, 2,145:

Անգործությունը մեռելներին է պատկանում, 1,334:

Անտառը կոտորող կացինի կոթը փայտից են շինում, 1, 396:

Անտառի ծառերը լուր տարան իրանց թագավորին, թե հայտնվել է մի գոր-
ծիք, որ մեզ կոտորում է: Այդ գործիքը «տոպորն է», որի գլուխը երկաթից է,
բայց կոթը փայտից: «Դա շատ վտանգավոր գործիք է, - ասաց թագավորը,-
երբ կոթը մեզանից է», առակ, 3,265:

Ատելություն նրանց նկատմամբ, որոնք թույլ են տալիս իրենց մորթել ոչ-
խարի նման, 3,75:

Անցյալը ուղղել չենք կարող, խոսենք ներկայի վրա, 3,7 8:

«Աշխարհս դմակ է, իսկ մարդը դանակ, պետք է աշխարհի այս յուզալի
կտորից կտրել և ուտել, թե չէ սովից կմեռնես», առած, 3,384:

Աշուղ-Պարսկերեն էջքս բառից է, որը նշանակում է բանաստեղծական ոգևորություն, 9,93:

«Առյուծի չգտնված տեղում աղվեսն էլ խոշոր գազան է», 3,217:

Առևտուրը բախտի բան չէ, խելքի բան է, 3,415:

Առանց ծեծի, առանց տանջանքի, աշակերտը ոչինչ չի սովորի, 1,248:

Աստված ինձ պատժեց, մի տարվա մեջ մի քանի ձախորդություններ եղան. «մեծ որդիս քո չարը տարավ», անասուններս «քեզ մատաղ եղան», հիմա արորս էլ չի բանում, մնացել եմ անգործ, աղա, 3, 220:

«Աստված թուրքի ձեռքում սուր է տվել իսկ հայի ձեռքում բահ», 3, 269:

«Աստված գյուղացուն մի հոգի է տվել այն էլ չի կարողանում առնել», 3, 270:

«Աստված առաջ մարդու խելքը գլխից կառնի, հետո՝ հարստությունը», 3, 289:

«Արջը միայն գիտե, թե ինչու է այնքան սիրով պտտվում մեղվի փեթակի շուրջը», 3,398:

«Արդարությունը ծիծեռնակի կաթ է դարձել ոչ մի տեղ չես գտնի», 3, 335:

Արևելքում գոտիի հաստությունը և շքեղությունը հարստության ու փառքի նշան է, 3, 235:

«Արձակ դաշտը, տափակ երկիրը շինում են նրան (մարդուն) ավելի ընտանեկան ավելի խաղաղասեր, միևնույն ժամանակ երկչոտ: Մինչդեռ, լեռը, անտառը պահպանում են մարդու մեջ նրա սկզբնական վայրենությունը և հատկապես նրա սրտի ամրությունը և քաջությունը», 1,387:

Արևելքում ընծաները շահ ստանալու միջոց են: Թագավորը տարին մի անգամ խալաթներ է ուղարկում նահանգապետներին կամ նշանավոր աստիճանավորներին: Պետք է ստանա պատասխանը: Կարևորվում է, եթե խալաթը հագել է նվիրյալը: Երբ պետք է գանահարել աստիճանավորին, տանում են նրա վերարկուն և գանահարում, 2,251:

«Բայց երևում է, որ խաչն էլ խոռվել էր իմ գլխին, նա ինձ խելք ու միտք տալու նպատակ չուներ», 1,253:

«Բարձր քաջությունը անձնագոհություն է պահանջում», 2, 270:

Բայազետի գերեզմանական լռությունը երբեմն խախտվում էր ագռավների կռնչոցով, որոնք թռչում էին «մեռելտիք ուտելու համար», 3,81:

Բայազետում «Կրոնական մոլեռանդությունը, խառնված զինվորական անգթության հետ, անցնում էր բարբարոսության ամեն մի չափից ու սահմանից», 3, 81:

Բեռնակիր ձիապանները, ջորեպանները անընդհատ գործ ունենալով անասունների հետ, այնքան են կոպտանում, որ մի աստիճանով են բարձր լինում անասուններից, 2,271:

«Բելաջեղ է», - Բելի բնավորություն է ստացել, 9,498:

Բոլոր հայերը Տաճկաստանում «էշով են գնում բազար, ձի հեծնելը նրանց արգելված է: Այս սովորությունը կար և Պարսկաստանում, ազնիվ անասունը՝ ձին, մահմեդականի համար էր, իսկ ստոր ավանակը՝ քրիստոնյայի», 2,39:

Բոլոր արարածների մեջ մարդը միակն է, որ գազաններից ավելի անգուլթ և ավելի անիրավ կերպով է վարվում իր նմանների հետ, 3,198:

Գազաններն ավելի կատաղում են, երբ սկսում են սիրել, բայց մարդը քնքշանում է, 3,125:

Գայլերից ազատվելու համար պետք է գայլի նման ճանկեր և ատամներ ունենալ, 3,115:

«Գավուրը» պետք է մի քրքրած, բարակ գոտի ունենա մեջքին կապած, որ հազալու ժամանակ տասը տեղից կտրվի և ոչ թե գեղեցիկ կին, հարուստ տուն, ընտանիք: Դա ամեն մի մահմեդականի բերանի առածն էր, 3,285:

«Գետինը մտնես, գրողը տանի քեզ, չար սատանա, պատանդ կարեմ, անիծված, նշանդ տեսնեմ», անեծք, 1, 2 75:

«Գերեզմանից մեռելը ետ չես բերի» (ապարդյուն է կորածի ետևից ման գալը), 3,599:

«Գզիր կոչվածները պաշտոնական անթերի որսորդական շներն են, սաստիկ հոտառություն ունեն, խիստ վարժված են, թե ինչ ճանապարհով պետք է հետամուտ լինել որսին», 3, 218:

Գիտությունը չոր ու ցամաք սնունդ է տալիս մարդկանց մտքերին, բայց բանաստեղծությունը կենդանացուցիչ սնունդ է տալիս նրանց սրտերին, հոգուն երևակայությանը, 2,459:

Գլուխդ մի խոնարհեցրու, ծեծողներ շատ կգտնվեն, 1,359:

«Գլուխը բարձրացրել է» (թանկացել է), 3,373:

«Գումբազ եք տեսնում, բայց մեջը զորություն չկա», առած, 3,383:

«Գուցե գերեզմանը միայն կարող կլիներ վերջ դնել խեղճ ծերունու ցավերին», 3,162:

Գողը գողի տանից բան չի տանի, 3,301:

Գյուղացու երգը նույնքան մեղամաղձոտ էր, որքան նրա տխուր սալակի ճռնչոցը, երկուսն էլ կարծես հառաչանքներ էին արձակում, 2,216:

Գյուղացին արթնանում է արևից առաջ, հանգստանում արևի հետ: Նա սովոր չէ անքունություն մեջ վատնել գիշերային հանգստությունը, 2, 342:

Գյուղացին առանց «օրհնյալ փայտ» տեսնելու, փող չի տա (տվեք ձեր ապառիկների թղթերը, իմ մարդիկ այն կհավաքեն), 8,270:

Գյուղացիներին Մասիսյանը համարում էր «կաթնատու կովեր», որի պատճառով տոկոսը նրա լեզվում կոչվում էր կաթ, 3,413:

«Դա պարոն Մասիսյանի խանութն է»- ասում էին ամեն մի խառնաշփոթ, խճճված բանի համար, 3,396:

«Դալար ծառն էլ չորի հետ խառնված այրվում է» /ո՞վ է ջոկում թացը չորից/, 3,278:

«Դատարկ կյանքը, անգործությունը շինել էր նրանցից մի տեսակ վայրահաչներ, որ մինը մյուսին կծելու սովորություն ուներ», 8,452:

Դեռ ջահել է, արյունը նոր է եփ գալիս, կմեծանա, խելքը գլուխը կգա, 2, 328:

«Դժոխքից մեռելը ետ չի դառնում», 3,122:

«Դիշքիրասի»- ատամի վարձ, այսպիսի վարձ էին ստանում քրդերը, երբ շնորհ էին անում հայի հացը ուտել կամ նրա տունը հյուր լինել 3,107:

«Դուք ջրի պղտորության մեջ ձուկ բռնողներ եք, պարզությունը ատելի է ձեզ: Դուք խավար եք սիրում, որովհետև գողերը ատում են լույսը» (Թովմաս Էֆենդուն ասաց վարդապետը), 3,157:

«Եթե մտնելու լինես մի քաղաք, և տեսնես, որ մարդիկ մի ականի են, դու էլ աչքերիցդ մեկը հանիր, որ նրանց նմանվես», 3,384:

Եթե ամառվա տոթը չլիներ, գարնան պատիվը չէին հասկանա, ձմռան ցուրտը չլիներ՝ աշնան պատիվը չէին հասկանա, եթե աղքատությունը չլիներ, փողի պատիվը չէին հասկանա, 3, 414-415:

Երբ մի տուն ես մտնում և ուզում ես, որ ուրախ անց կենա, պետք է առաջ տանտիրոջ «բամբակը բաց անել» (այսինքն՝ պետք է նրա ուղեղը թմրացնել օղիով, հարբեցնել), 3,222:

«Եթե շատ բան գիտենաս, շուտ կպառավես», 1,485:

«Երբ կրակը տխուր ձայն է արձակում, ասում են լաց է լինում», 3,503:

«Երբ «Հայր մերը» թարս են կարդում, Հիսուս Քրիստոսի շնորհիվ սատանան իր պոչի վրա մեխվում է գետին, էլ չի շարժվում տեղից», 2,44:

Երեխայի մաքրությունից կարելի է գաղափար կազմել և մոր մաքրության մասին, 2,23:

Երեխաների գդակների վրա կարում են օձի կամ վիշապի ձև ունեցող արծաթե բժժանքներ, որն ունի դյուրական նշանակություն, 3,99:

Երեք թերթիկ- բույս է, որը գործածվում է կախարդությունների մեջ, 3,480:

«Երկու չարյաց փոքրագույնն է ընտրելու», 8,609:

Ես կարծում եմ, որ գինվորական նոր գործակատարը այդ խեղճին «լավ կկթի», 3, 241:

«Ջենքը քրդի մարմնի անբաժան անդամներից է», 3,104:

«Էշին մինչև չծեծես, բեռը չի տանի», 3,145:

«Էշի պոչը ոչ կերկարի և ոչ էլ կկարճանա», 3,149:

«Էշին Երուսաղեմ էլ տանես, էլի էշ կմնա», 3,149:

«Էշին մինչև չծեծես իր չափը չի ճանաչի», 3,160:

«Էշից վախեցավ և սկսեց փախանին ծեծել», 3,170:

«Էշը որքան լավ բան անե, այնքան իր գարին կավելացնե», 3,221:

«Էշից հարցրին քանի կնիկ ունես, ցույց տվեց ամբողջ նախիրը», առած, 3, 237:

«Էշի ականջները երկար են լինում, բայց խելքը կարճ», 3, 240:

«Էշը այնպես չի խրվել, որ կարելի լինի ցեխից հանել» (գործը վատ է գնում, շատ վատ), 3,246:

«Էշը չպետք է քացի տա խթանի դեմ», եթե չի ցանկանում իր ոտքը վիրավորել (հայր չպետք է հակառակվի թուրքին, զգույշ լինի), 3,247:

«Էշը կդատի, ձին կուտի» (այն որ Աստված է կարգադրել մարդը չի կարող փոխել), 3,269:

«Էշի քացին ավելի է ցավացնում, քան թե ձիունը», 3,279:

«Էշը թեև ինքը մի բան չէ, բայց նրա մազը մախմուր է սրբում» (Արևելքում խոզի մազը պիղծ համարելով հագուստը և այլ բան մաքրելու համար, վրձինները պատրաստում են էշի մազից), 8,280:

«Էշը խո էշ է, բայց ջորին ավելի գեշ է», 3,281:

«Էսպես կլինի ղոչաղ տղան, մարդու աչքի միջից մազ կթռցնե և մարդը չի իմանա», 3,401:

Ընտանեկան կյանքի մեջ բռնակալ հայրը երկաթե գավազանով էր իշխում, 2,220:

Ըստ ավանդույթյան, տոն օրերին վայրի անասունները հոժար կամքով գալիս էին ժողովուրդի կողմից մոռացված կիսավեր մատուռներ ու վանքեր, որոնց հովիվները մատաղ էին անում, 3, 222:

Թե ուզում ես այս աշխարհում ապրես, պետք է գայլի հետ գայլ դառնաս, գառան հետ՝ գառ, 1,359:

Թիֆլիսի կինտոներն իրենց բթամատի վրա կրում են գալարված օձի ձև ունեցող մատանի (ունի դյուլթական նշանակություն), 3,99:

Թիֆլիսեցին Կ. Պոլսում ուզում է կարմիր լոբի ուտել, սակայն չի գտնում: Ընկերները սպիտակ լոբին ներկում են և տալիս նրան, սակայն երբ գցում է ջրի մեջ, ներկը թափվում է: Նա կնոջը գրում է. «Այստեղ կարմիր լոբին շատ վատն է, հենց որ ջրի մեջ գցում ես, սպիտակում է», 3,455:

Թողմաս Էֆենդին ինքն էր «եփել այդ ապուրը» (նա էր մատնել կարգադրել խուզարկելու ծերունու տունը), 3, 232:

«Թող ուրիշը փրկե, ես խփշտեմ», առած, 9,244:

«Թող Երուսաղեմի սուրբ տաճարի մեջ իմ տեսած լույսը աչքս կուրացնի, թող ես Քրիստոսի մեխ խփողներից մեկը լինեմ, եթե սուտ ասեմ», երգում, 2, 78:

Թշնամու հետ անգուլթ է իբրև գազան, բարեկամի հետ բարի է, իբրև հրեշտակ: Նրա դեմքն այնքան պայծառ է, ինչպես ոշտունյաց պարզ երկինքը, 2,316:

Թուրք պաշտոնյաների «բերանը միշտ կարելի է ցեխել», (մի քանի ոսկիներով), 3,237:

Թուրք հիանապետը, համեմատաբար, ավելի ազնիվ զգացմունքի «տեր մարդ էր, քան հայ Էֆենդին», 3,241:

«Թուրքին ծեծիր, հետը բարեկամացիր», 2,270:

Թուրք բերանի մեջ սառեցնելու չափ ցուրտ էր, 2,469:

Թրի ծայրից արյուն է կաթում, բոլորը սարսափում են, դողում նրանից, 2,220:

Ժամանակը, ծերութունը և հոգևոր կոշումը մեղմացրել էին նրա սիրտը և դեմ էին տվել բարի ու առաքինական արտահայտություն, 2, 288:

«Ժողովուրդը կողոպտել և տաճարներ կառուցել-հազիվ թե կարելի է բարեպաշտություն համարել», 2,233:

Ժողովուրդը «ավելի բարվոք է համարում հպատակվել ռուսաց արծիվին, քան օսմանցոց կիսալուսնին», 3,91:

Ժողովորդի հետ խոսելու համար պետք է հարյուրավոր առակներ և առածներ գիտենալ 3,172:

Իր խրճիթի մարած օջախի նման մխում է նրա սիրտը, երբ իր ցեղի ազատությունը կորած է տեսնում, 2,311:

Իր կշռով ոսկի արժի այդ մարդը, բացել է ուսումնարան և մեր զավակները շենք ու շնորհք են սովորել (Մ. Խրիմյանի մասին է խոսքը): Առաջ կապելու գժեր էին, հիմա գառնուկի նման խեղճացել են, 2,222:

«Իր նախնիների փառավոր անունները գողանալ և հեռու մնալ նրանց առաքինություններից... այժմյան հայերիս մեջ նոր բան չէ», 3,385:

Ինչ բարեկամություն կարող է լինել գայլի և ոչխարի, աղվեսի և հավի մեջ, 3,137:

«Ինչու՞, այսպես է երկրի և երկնքի դատաստանը», 3,109:

Ինչ լավ բան է գիտությունը, որքան նախապաշարմունքներ, սնահավատություններ, է փարատել այն, 2,282

«Ինչ որ քո ոտքը գիտե, այն մեր գլուխը չգիտե» (աղա, դու ես իմանում), 3,380:

«Ինչքան դուքանը մուժ լինի, այնքան ապրանքը աչքի լավ կերևա», 3,398:

«Լավ է տան շունը լինել քան տան պատիկը», 3,421:

«Լավ է մարդու աչքը դուրս գա, քան թե անունը», առած, 3,385:

Լարախաղացների օգնականներին կոչում են «տակի մասխարա», 3,82:

«Լուսավորչի քամի», - Արարատյան գավառի կենսատու ոգին է: Ըստ ժողովրդական ավանդության, մեր Լուսավորիչ հայրը նրան սահմանեց իր ժողովուրդը հիվանդություններից ազատ պահելու համար», 3,319:

«Խենթը մի քար գցեց փոսը, հարյուր խելոքներ հավաքվեցան, չկարողացան դուրս հանել», առած, 3, 71:

«Խամից դուրս բերել»- Երկրագործական քաշող անասուններն ամբողջ ձմեռ պահում էին գոմում, գարնանը դուրս բերում աշխատեցնելու¹, 3,388:

Խալֆա Թորոսին ասում էին «դպրոցի շուն», առավել այն պատճառով, որ ամենքին կծում էր, ամենքի վրա հաչում, 1,277:

«Խենթից- ուղիղ պատասխան», առած, 3,71:

«Խաչոն այնքան գավակներ ունի, որքան անասուններ» (ակնարկում է ընտանիքի անդամների մեծ թիվը), 3,94:

«Խուրչիղը, ինչպես ամեն մի քրդի կին, իր ամուսնուն հանգիստ չէր թողնի, եթե նա դադարեր ավազակություն անել», 3,216:

Խրիմյան Հայրիկի ուխտյալ երկիրը Վասպուրականն էր, հայրենասիրությունը հասնում էր մոլեռանդության, իսկ կրոնասիրությունը, մինչև բարձր առաքինության, 2, 184:

Խրիմյան Հայրիկը ընդամենը 36 տարեկան էր, կարծես Հայրիկ անունը վաղ էր նրա հասակին, սակայն նրա նախաձեռնությունները և սերը լրիվ հասկանալի էին դարձնում այդ անունը, 2, 183:

«Ծերուկը բավական հարուստ է, պետք է նրան կլթել», 3,233:

Ծիծեռնակը սրահի ձեղունի գերաններից մեկի կողքին կպցրել էր իր բաժակաձև բույնը, 2,101:

«Ծնողների նախապաշարմունքը շատ անգամ պատճառ է դառնում գավակների անբախտությունը», 3,504:

Ծովը մտնողը թրջվելուց չի վախենա, 2,206:

¹ Երբ Խաչոն տերտերի հետ ճշտեց, որ «Օրը բարի է», - գրում է Րաֆֆին, - որոշեց «խամից հանել» անասուններին, որպեսզի «սովորեն դրսի օդին ու լույսին»: Նրանց ճակատներին «անեփ ձու զարկեց», պարանոցներին կաշվի մեջ կարված «մի-մի թելիսման» կապեց, որ չարը խափանվի (տե՛ս **Րաֆֆի**, Խենթը, էջ 172):

«Կարծես այս գիշեր տխրություն դեր իր սև թևերով նստած լիներ այդ խաղաղ ընտանիքի սրտի վրա», 3,110:

«Կարծես բախտը ամուսնություն մեջ ներդաշնակություն չի սիրում», 3,387:

«Կարծես ինձ համար կարմիր հարս է դարձել, սպասում է, որ ես «բերանացուկ» տամ /ասում է Մարոն լուռ մնացող մարդուն/, 1, 456:

Կինը տվեց մեզ լեզու, ազգություն և պահպանեց հայ ընտանիքի բարոյական հիմքը, 3,205:

«Կինը մի դառը պատիժ է տղամարդու համար», ասում էր նա հիասթափված կանանցից, իր սերը դարձնելով ջորիների վրա, 2,269:

«Կովը կովի մոտ են կապում, հորթը՝ հորթի մոտ, եզր՝ եզան մոտ» 1,405:

Կողոպուտ - Երբ մեռավ Կարապետ Էֆենդին, նրա վերարկուն ինձ տվեցին որպես «կողոպուտ», յոթ տարի է ինչ հագնում եմ¹, 3,282:

«Հացը Աստծո տվածն է և նրան է պատկանում: Աստծո աղքատները պետք է կերակրվեն նրանից», 3, 102:

Հայը ազդեցում է միայն այն ժամանակ, երբ տերտերը նույնպես ազդեցում է: Եկեղեցու պատերից դուրս՝ նա Աստծուն չի մտաբերում, 2, 272:

Հայ ժողովուրդը զարմանալի է, նրան սպանելը եթե չասեմ անհնարին է, ապա շատ դժվար է: Նա այն բազմազխանի, առասպելական վիշապն է, որ կոչվում է հիդրա, որի կտրած գլխի տեղը բուսնում է ավելի զորավորը: Դարերի ընթացքում համաշխարհային դարբնոցի սալի վրա, հայը այն աստիճան ծեծվեց, տաշվեց ու կոփվեց, որ ստացավ երկաթե ամրություն, 3,198:

Հայոց լեզուն ընտանիքի մեջ պահպանողը և իր զավակների բերանը դնողը կինն է, 3,205:

«Հային ի՞նչ սազ կգա զենքը, եթե կրակը տալու լինես երեխայի ձեռքը, առաջ իր մատը կայրե», 3,279:

Հացը դանակով կտրելը մեղք է, 3,404:

«Հացը շատ բան կարող է շինել», 3,404:

¹ Բաֆֆու այս հիշատակումը կիրառվել է բավական երկար ժամանակ, որի մասին Կ. Սեդ-բույանը գրել է. մինչև 19-րդ դ. երկրորդ կեսը Գյումրիում հանգուցյալի շորերի նվիրատվության սովորություն է եղել, որպես հոգեբաժին, որը կոչվել է «մեռելի շորերի կողոպուտ», հանգուցյալի շորերը տալիս էին տերտերին, ժամկոչին, գերեզմանափորին: Երբեմն հանգուցյալի հարազատները չցանկանալով շորերը «կողոպուտի տալ», փոխարենը դրամ էին տալիս: (Տե՛ս Կ. Սեդբույան, Արիեստավորական ավանդույթները և դրանց արտահայտությունները լենինականցիների կենցաղում, «Հայ ազգագրություն և բանասիրություն (սյուլթեր և ուսումնասիրություններ)», գ. 6, Երևան, 1974, էջ 248:

Հայկական գեղարվեստը, ճարտարապետությունը զարգացավ վանքերի շինության մեջ, իսկ հայկական գեղասեր ճաշակը՝ տեղերի և տեսարանների ընտրության մեջ, 2,247:

«Հանգստացնելը» Կրպոյի լեզվում սպանելու նշանակություն էլ ուներ, 3,124:

Հարգանքը դեպի ծերը և նրա խրատները, այդ հասարակության մեջ, սրբագործված կանոններից մեկն էր (Ռշտունիք), 2,328:

«Հաջի Իսաղի ասածներից մեկը եթե ճշմարիտ լինի, ջորին կծնի», 2,391:

Հասոն այնքան մեծ ընտանիք ուներ, որքան մեծ թվով չորքոտանիներ, 2,481:

Հարուստները սովորություն ունեն իրենց հարստությունը ծածկել աղքատության կեղևի տակ, 2,399:

«Հարսանիքից հետո երաժշտություն» (շատ ուշ է), 3,488:

Հենց որ երեխան տանը մի ծպտուն է հանում, մայրն ասում է. վարժապետիդ կկանչեմ: Նա սկսում է դողալ և լեզուն քաշել, 2,222:

Հին վիշապները շուտ չեն պառավում (կտեսնես շատ քիչ փոխված), 1,302:

«Հիմա ո՞վ չի սիրում փողը, հիմա փողի բազար է, բոլորը փողի համար են աշխատում», 3,335:

«Ձին ու ջորին պիտի կռվեն, իսկ մեջտեղում էլը կաստկի», 3,184:

Ձիերը, շները կատուները, բոլոր ընտանի անասուններն ունեն առանձին նշաններ, որոնցով ճանաչում են դրանց չար ու բարի ազդեցությունը տիրոջ բախտի վրա: Դրանք երևի խոր կապ ունեն մեր հեթանոսական անցյալի հետ, 3,394:

Ձրի հացը մարդուն գիրացնում է, 2, 422:

Ղազի ճտին որքան արգելես, որ գետը չմտնի, չես կարող, հենց որ ձվից դուրս եկավ կվազի ջուրը, 3, 388:

«Ճանճը թեև ոչինչ է, բայց մարդկանց սիրտը պղտորում է», 8, 608:

«Մարդ կա, որ հազար մարդու արժե, հազար մարդ կա, որ մի մարդ չարժե», 1,356:

Մայրս գիշեր ու ցերեկ հանգիստ չուներ. «ասեղը, ջահրեն և թեշին անընդհատ գործում էին», 1,230:

Մայրս ինձ հանձնելով վարժապետին ասաց. տեր հայր «...որդիս քեզ համար զուլ (ճորտ) եմ բերել, միսը քեզ, ոսկորը մեզ. ինչ ուզում ես արա, միայն երեխան մի բան սովորի», 1,244:

Մասիսյանը երկուշաբթի առավոտյան ոչ մեկին փող չէր տալիս, հավատացած էր, որ եթե երկուշաբթի առավոտյան որևէ մեկին փող տա, ամեն շաբաթ փողը դուրս կգա, 3, 499:

«Մեր գյուղացիների ձեռքում երբ օտար հյուր է ընկնում, շուտով բաց չեն թողնում», 2,341:

«Մեկը ամենի համար է, իսկ ամենը մեկի համար», 3,112:

Մեր կողմի հայերը մի լավ առած ունեն. «Թուրքին մինչև չծեծես, բարեկամ չի դառնա», 3,170:

Մեր մեղքերից ջուրը պակասել է, անձրև չի գալիս, «գնացին տերտերի մոտ նա գիր բացեց, ասաց, երկինքը կապել են», 3,377:

«Մինչև տղան լաց չլինի, մայրն էլ ծիծ չի տա», 3,186:

Մեր ժողովրդի մեջ պահպանվել են զանազան ավանդույթյուններ, սնոտիապաշտություններ, առասպելներ, զրույցներ, երգումներ, անեծքներ, առակներ, երգեր. դրանք խոր կապ ունեն մեր ամենահին անցյալի հետ, 9, 94:

«Մեր գրաբար լեզուն մի քանի տասնյակ դարեր առաջ մեռած լեզու է, որ հասել է մեզ դրված հին մատենագրության դագաղների մեջ», 9,95:

Մեր կառավարությունը փափուկ տեղերի փորփորողն է, երբ պինդ տեղը հասավ բրիչը մի կողմ կռնի: Քրդին չեն նեղացնի, քանի որ նրանց տունը կլթալանեն կամ գլուխները կկտրեն, 2,384:

Մեր ներկան մեր անցյալի շարունակությունն է, 2, 212:

Մեծերը ընծաներ են տալիս փոքրերին և նրանցից փող ստանում, կաշառակերությունը վերևից իջնում է ցած, 2,251:

Մեր տունը ոչինչ չէր մնացել այն նմանվում էր մերկ գերեզմանի, 1,220:

Մի ծառ, որ հաստատուն ու խոր արմատ չի գցել հողի մեջ, չի կարող դիմանալ աշխարհի փոթորիկներին, 3,304:

Մի լավ գիրքը կարող է փրկել մի ամբողջ ազգ, 2,459:

«Մի չարագործի ձեռք,-ասում է առակը,- եթե չես կարող կտրել, պետք է համբուրես և գլխիդ վրա դնես», 3, 170:

Մինչև մահ տատը չթողեց իր ձեռքի կառավարման գավազանը՝ ահագին փայտյա շերեփը, որով ընթրիքի և ճաշի ժամանակ կերակուր էր բաժանում, 1,211:

Մինչև չպղտորվի, չի պարզվի, 2,259:

«Մինչև խելացին կմտածե, խենթը գետից անց կկենա», առակ, 3,71:

Մինչև այսօր հայերը երգվում են արևով. «իմ արև, քո արև», դրանք այնքան հին են, ինչքան արևի պաշտամունքը: Աղոթելիս՝ երեսը արևելք, դա մտավ քրիստոնեությունից մեջ: Հայը ջերմեռանդորեն է նայում արևելք, գերեզմանի մեջ՝ երեսը՝ արևելք, 9,102:

Միքայելը տան սպասավորից դարձել էր «դուքանի աշակերտ», 3,393:

Մուհամեդը տվեց իր ժողովրդին սուր, իսկ Քրիստոս՝ խաչ. ահա զանազանությունը մեր և մահմեդականների միջև, 1,358:

Նա այն անձնավորություններից է, որ «սև ջրից սեր կքաղի» (ամենաչնչին բանից օգուտ քաղել գիտի) 2,207:

Նա դեռ չսիրած, սիրո համար նվերներ էր պատրաստում (փոքր աղջկա մասին է խոսքը), 2,103:

Նա դեռ նստած էր խրճիթի տանիքի վրա և արևի ճառագայթներով տաքացնում էր սառած մարմինը, 2,313,

Նա ներկայացնում էր գեղեցկությունն իր հասունության մեջ, 2, 476:

Նա հաջողված էր, նրա հեզ, հրեշտակային աչքերը նույնպես ծփում էին, 2,402:

Նա իսկապես շատ դժբախտ մարդ էր, տխուր և դառը կերպով էին անցել նրա օրերը, 2,460:

«Նա սեղանի մոտ շատ փոքր կերպով բայց չափազանց խմեց, կարծես թե, գինու բաժակներով աշխատում էր հանգցնել իր սրտի կրակը», 3,156:

Նա «կիսաքուրդ» էր դարձել, աներկյուղ, այրական սիրտ էր ստացել 3,47:

Ներսս ինձ է այրում, դուրսս՝ ուրիշին, առած, 3, 383:

«Նիզակը գողացողը առաջ նրա թաքցնելու տեղը կգտնի», 1,515:

Նորեկ ծիծեռնակը հրավիրում է մշակին դեպի գործ, արդեն պատրաստել են արորն ու գուլթանը, 3, 96:

Նրա եզներից երկուսն ընկան բարձր ժայռից, մեկն էլ հիվանդ է. «հիմա նրա արորը բոլորովին անգործ մնաց», 5,326:

Շանը մինչև չծեծես, չի բարեկամանա, 1,276:

«Շաբաշ»- Այն արծաթն էր, որ ստանում են հարսանիքին պարողները ներկաներից, իսկ հետո տալիս երաժիշտներին, 3,224:

«Շունը երբ զասաբ խանա կմտնի, մի ոսկոր նվեր կառնե (երբ թուրքը հայի տուն է մտնում, ձեռքը դատարկ դուրս չի գալիս)», 3,247:

«Շունը շնից, երկուսն էլ մի տնից», 3,111:

Ով իր անցյալը չի մոռանում, ներկայի մասին կարող է հոգալ 2,264:

Ով որ չի ճանաչում իր հայրենիքը, չի կարող ճշմարտապես սիրել նրան, 2, 279:

Որտեղ երկու տուն հայեր կան, նրանց մեջ չորս կուսակցություն կա: Անմիաբանությունը վաղեմի ժամանակներից մեր ազգը ուտող, մաշող ցեցն է եղել, որը ժառանգաբար անցել է մեզ, 2,210:

Ողորմած եղիր դեպի քեզանից տկարները, բայց թշնամուդ մի խնայիր, 1,359:

«Որդի, մինչև ծեծ չուտես, մինչև նեղություն չքաշես, բան չես սովորի», 1,252:

«Ոտքի թաթերից մինչև վարտիքի ծայրը,- այդ ընդարձակ տարածությունը,- մնացել էր մերկ, որովհետև Սիմոն պատվելին սովորություն չունեի ամառը գուլպա հագնելու», 2,246:

Որքան մեծ գորություն ունի գիրքը, 2,272:

Որսով ապրողը մի օր կուշտ է լինում, մյուս օրը քաղցած, 3, 115:

Ո՞վ չի գողանում, հիմա ամենքը գողանում են, 3,335:

Ոսկու փայլը կուրացնում է մարդկանց աչքերը, 3,203:

Չարը միշտ չարով կսասանվի, 1,454:

«Չարչիները հյուսիս ծծում են և միայն չեն են տալիս ուրիշին», 3,416:

Պառավը դուրս եկավ նայեց երկնքին, իմանալու թե գիշերվա որ ժամն է, աստղերը նրա ժամացույցն էին, 4,352:

Պատի միջից անցք էր արված դեպի հարևանի տուն, դրանք համարյա կային բոլոր գյուղերում, վտանգի ժամանակ ծառայում էին լուրեր հաղորդելու: Մերձավորների մեջ այդ անցքերը այնքան լայն էին, որ կարելի էր իրեր փոխանցել կամ վառված ճրագներ, 3,276 :

«Պապիկի ականջները այն ժամանակ են միայն վատ լսում, երբ խոսքը իրեն ձեռնտու չէ, բայց պետքական խոսքը նա իսկույն լսում է», 3,447:

«Պարտականի երեսը սև կլինի, իսկ լեզուն՝ կարճ», 3,380:

«Պաշտոնը սրբում է կեղտերը», 3,162:

«Ջահելի խոսքը կշեռքի մեջ չեն դնում», 3,155:

«Սատկած էշ է պտռում նալերը դուրս քաշելու համար», 3,241:

Սաջսադա- այն սփռոցը, որի վրա մահմեդականը աղոթք է անում: Տանը արվող աղոթքի ժամանակ դա ամենագեղեցիկ սփռոցն էր, 3,235:

«Սարթ (դյուրաբեկ) ամուսինը շուտով է կոտրվում», 3,384:

Սատանա բառը Մասիսյանի լեզվում նշանակում էր խորամանկ, խելացի, իմաստուն, ով սատանա չէ, հիմար է, 3,416:

Սալմաստում «ահագին մոխրաբլուրները հիշեցնում են մոգական ատրուշանները և սրբազան կրակի հազարավոր տարիներով լափած նյութերը», 1,223:

«Սոված էշը գարու հոտն առավ, մինչև գարին բերելը հոգին տվավ», 8, 370:

Միմոն պատվելին մոտենում էր արաղի կաթսային և արաղը փորձելով ասում. «Հիմա ավելի թունդ է: Կարծես նա մի չափ լիներ, որով այգետերը անընդհատ փորձում էր արաղի թնդության աստիճանը», 2,215:

«Սոխը որտեղ էլ տնկես, իր համն ու հոտը չի կորցնի», 2,384:

«Սոլա գետը ... Սալմաստա Նեղոսն է,- որի բազմաթիվ ճյուղերի վրա... շարված են մեծ ու փոքր գյուղեր», 1,222-223:

Սովը, տարբեր հիվանդությունները, բռնակալների գազանությունները ստիպում էին մարդկանց, ցավերից ազատվելու նպատակով, իրենց գցել «Աստծո գիրկը», հանգստություն որոնելով «հետգերեզմանյան խաղաղության մեջ»: Առաջանում է հակում դեպի անապատ, դեպի ամայություն, 2,147:

«Սուր բարձրացնողը սրով կկործանվի», 3,279:

«Ստոր ծագումից բարձրացած մարդիկ աշխատում են իրենց տոհմային անցյալը մոռացության տալ և ազնվացնել», 3,385:

Ստեփան, այն ի՞նչ պտուղ էր, որ Ադամը կերավ մերկացավ, Եվան կերավ, խենթացավ /թուզ/, 2,45:

Սրի հետ խաղացողը, միշտ սրով կմեռնի, 1,454:

Սրբիր անբախտի արտասուքը, մխիթարիր նրան, եթե պահանջվի քո կյանքն ու արյունը, 1,454:

Վարժապետն ասում էր. «Կուշտ փորով չի կարելի դաս սովորել, երբ մարդ մի բան ուտում է, խելքը պակասում է», 1,248:

Տան գաղտնիքը երեխայից հարցրու, առած, 2,105:

«Տանը սատանա, դուրսը քահանա» (ընտանիքում բռնակալ գազան, դրսում՝ գառ: Նա ուներ սողալու բոլոր հատկությունները, օձի պես առածգական էր, գալարվում, ծովում, ծալվում էր: Օձի նման իր թույնը թաքցրած ուներ խայթոցի մեջ), 3, 384:

Տանուտերի հետ առաջ տեսնվիր, հետո գյուղը կողոպտիր, թուրքական առած, 3, 214:

«Տերտերի բերանին էլ պետք է մի փոքր յուղ քսել», 3, 209:

Տեսած բան է, աղջիկը ուր, կարդալը ուր, 2,214:

Տիրացու Միմոնը գյուղի հասարակության մեջ մեծ հեղինակություն ուներ. «Նրանց համար զանազան կախարդական թղթեր էր գրում, հմայում էր, գուշակություններ անում», 3, 208:

Տիրամոր յարան (խոցը) ընկնի քո վրա, անեծք, 1,421:

Տո, անիծյալ, դու էլ մարդ ես, դու էլ սպանիր, 3,75:

«Տունը առանց երեխաների ամայի անապատի է նման, որ զուրկ է լինում նոր աճող և թարմ բույսերից», 8,498:

Յեղի անդամի սպանություն համար, վրեժխնդիր է լինում ողջ ցեղը, որովհետև քրդերի մեջ միասնություն կա, կարծես բոլորը մի ընտանիքի զավակներ լինեն, 3,112:

«Փոփոխական ծառը արմատներ չի տարածում մայր հողի մեջ և գոսանում է (ազգը մաշվեց, մասամբ ոչնչացավ իր թափառումների մեջ, գաղթականությունից և խելքի չեկավ)», 3,404:

Ցասման խաչեր - կանգնեցնում էին երաշտի, կարկուտի, հիվանդությունների դեմ, բնության զայրույթը մեղմելու) Բաֆֆին հիշատակում է Պարսկաստանի իրենց գյուղում 1865թ. խոլերայի դեմ խաչեր կանգնեցնելը) 9, 106:

«Քարավան-դա արևելքի շարժական կյանքն է», 2,254:

«Քարանձավներում ջիններ (դևեր) են բնակվում, այնտեղ գնացողը այլևս չի վերադառնում», 2,71:

«Քո ճակատի քրտինքով պիտի վաստակես քո հացը», 3,353:

Յրոնք - Սեմի որդին իր սպասավորներով բնակվեց այստեղ և երբ «այնտեղից ցրվեցան, տեղի անունը մնաց Յրոնք», 9,110:

Քրդի նիզակը ավելի մեծ գործ է կատարում, քան թե մեր աշխատանքը, արորը և գուլթանը, 3,137:

Քրդերի հովվական երգերը տխուր են և մելամդձոտ, նրանք խիստ մեղմ կերպով ներդաշնակվում են հովվի սրնգի խուլ և զգայուն հնչյունների հետ: Մինչդեռ, պատերազմական երգերը կրակոտ և խրոխտ են, նրանք լիահնչյուն համարձակությամբ որոտում էին թմբուկների ձայնի հետ, 1,361:

«Օտարի ձեռքով միայն լավ է փուշ քաղել», 3,398:

Այսպիսով Բաֆֆու աշխատանքներից դուրս բերված ժողովրդական բանավոր ստեղծագործությունը անփոխարինելի գանձ է մեր ավանդական կենցաղամշակութային ամենատարբեր խնդիրների վերաբերյալ: Ավանդական կենցաղը, լեզուն ու բարբառը կիրառելու շնորհիվ հեղինակի վեպերը դարձել են տիպական ու բնութագրող: Դրանց զգալի մասը բացակայում է գրավոր աղբյուրներում, հեղինակը գրառել է ժողովրդի բանավոր խոսքից, որոնք ինչ-որ չափով առկա են նաև մեր օրերում:

Բաֆֆու բանահյուսական ողջ ժառանգությունը գեղարվեստական խոսքի և ազգագրական նյութերի համադրման փայլուն օրինակ է: Արևմտահայերի ու պարսկահայերի կենցաղի, լեզվամտածողության, համ ու հոտի ինքնատիպության ուրույն դրսևորումները Բաֆֆու ժառանգության էջերում, հավանաբար պայմանավորված են հենց այս հանգամանքով:

Բաֆֆու կողմից հայ բանարվեստի նմուշների գրառումից անցել է առավել քան մեկ ու կես դար, սակայն այսօր էլ դրանք արդիական են և ունեն որոշակի արժեք:

Անմար է Բաֆֆու ժառանգության նկատմամբ հետաքրքրությունը նաև մեր օրերում:

ՀԱՅ ԲԱՆԱՐՎԵՍՏԸ ԲԱՖՖՈՒ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐՈՒՄ

Անուշավան Պեպրոսյան

Բանալի բառեր՝ Հայի կացին, բելացել է, օրհնյալ փայտ, բամբակը բաց անել, բերանը ցեխել, տակի մասխարա, կապելու գժեր, Լուսավորչի քամի, խամից դուրս բերել, կարմիր հարս, հանգուցյալի կողոպուտ, երկինքը կապել

Նրա վեպերը, պատմվածքները ճամփորդական նոթերը, նամականիները շաղախված են բանահյուսական տարբեր ժանրերին պատկանող հարուստ վկայություններով: Բաֆֆու ժառանգությունում գեղարվեստն ու ժողովրդական բանահյուսության ժանրերը հանդես են գալիս միահյուսված: Ժողովրդական բանահյուսությունը ներկայացված է արվեստի մակարդակով, գեղարվեստը դրանցով շաղախելու և շրջանառության մեջ դնելու նախանձելի հմտությամբ: Դրանք անփոխարինելի գանձ են մեր ավանդական կենցաղամշակութային ամենատարբեր խնդիրների մասին:

Բաֆֆու գրառած բանահյուսական նյութերը մեծ մասամբ բացակայում են գրավոր աղբյուրներում: Հեղինակը գրառել է ժողովրդի բանավոր խոսքից, «գյուղացու խրեփթը» մտնելով, որի շնորհիվ այդ արժեքները փրկվել են անվերապահ կորստից:

АРМЯНСКОЕ УСТНОЕ ТВОРЧЕСТВО В ПРОИЗВЕДЕНИЯХ РАФФИ

Анушаван Петросян

Ключевые слова: Топор Арменина, Заткнуть рот, «Свещенная» указка ветер Просветителя, «красная невеста» невеста отрабление мертвеца, уми-лостибить небо

Армянское устное творчество в произведениях Раффи - его романы, рассказы, путевые заметки, письма замешаны богатыми свидетельствами, принадлежащими различным фольклорным жанрам. В хронологии Раффи художественное творчество и жанры народного фольклора выступают переплетенно. Народный фольклор представлен на уровне искусства, с завидным мастерством замешивания им художество и введения в оборот. Они являются незаменимым сокровищем о самых разных наших быто-культурных задачах.

Записанные Раффи фольклорные материалы в большинстве своем отсутствуют в письменных источниках. Автор записывал из устного слова народа, заходя “в крестьянскую избу”, благодаря чему эти ценности спасены от неминуемой гибели.

ARMENIAN FOLKLORE IN THE WORKS OF RAFFI

Anushavan Petrosyan

Keywords: *Armenien's chopper becom Bel, blessed wood, muzzle, intoxicite, jester. Illuminator's wind, red bride the defunct's robberi, connect the sky.*

The novels, stories, traveler's notes and letters of Raffi are full with data on different folklore genres. In the heritage of Raffi belles-letters and folklore genres are interconnected. The folklore is represented on high level with a special ability to mix the fiction with folk tales. They are invaluable treasures towards different problems of our traditions, social life and culture.

Folkloristic materials written down by Raffi, as a rule, are absent in written sources. The author took them directly from the people entering into the “house of the villagers”, due to which these values were saved from inevitable loss.